ԹԵՄԱ 5

ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ

7. ՉԻՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ: ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Գյուտերը Չինաստանում

Չինացիները բարձր էին գնահատում իրենց հին ավանդույթները սակայն հարգանքն իրենց անցյալի նկատմամբ հետ չէր պահում չինացիներին առաջընթացից: Նորանոր գյուտերը նպաստում էին կյանքի բարելավմանը: Դարեր պահանջվեցին, մինչև որ շատ չինական գյուտեր հասան Եվրոպա:

Տան արքայատոհմի ժամանակաշրջանում կատարված գյուտերից ամենանշանավորը թերևս **տպագրության գյուտն** էր: Փայտյա տախտակներով տպագրությունը տպագրության ամենավաղ ձևն էր, որ չինացիներն սկսեցին օգտագործել VIII դ. վերջերին: Հիերոգլիֆները փորագրվում էին փայտյա տախտակի վրա, ապա թանաք էին քսում և մի թերթ թուղթ դնում տպագրելու համար: Ամբողջ գործընթացը կատարվում էր ձեռքով: Չին գիտնականները 21 տարի ծախսեցին կոնֆուցիական դասականների բոլոր 130 հատորները տպագրելու համար:

1024 թ. Սուն կայսրությունում թողարկվեց աշխարհում առաջին թղթադրամը:

1045 թ. չինացի Պի Շեն հնարեց շարժական տառատեսակներ: Նա հատում էր հիերոգլիֆները մածուցիկ կավից և թրծում մինչև պնդանալը: Այնուհետև նա պատրաստում էր յուրաքանչյուր էջը անհրաժեշտ երոգլիֆները տեղադրելով երկաթյա շրջանակի մեջ: Տպագրության այս եղանակը խիստ արագ էր և արդյունավետ:

Մյուս կարևոր նվաճումը վառորդի գյուտն էր, որը կատարվել է թերևս VII դարում: 1288 թ. չինացիները հնարեցին թնդանոթը: Կողմնացուցի գյուտը նույնպես պատկանում է չինացիներին:

Լուցկու գյուտը կատարվել է 577 թ., հեծանիվի շարժական շղթայի հայտնագործումը՝ 976 թ. և այլն: